Տ. ԱՂԱՆ ԱԲԵՂԱ ԵՐՆՋԱԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՇՈՂԱԿԱԹԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(16 օգոստոսի, 2014 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Դու ես Քրիստոսը, կենդանի Աստծո Որդին»
(Մատթ. ԺԶ. 15):

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ,

Մատթեոսի Ավետարանի ԺԶ. գլխում պատմվում է, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Փիլիպյան Կեսարիայի կողմերն անցնելով, իր աշակերտներին հարցնում է, թե մարդիկ ի՞նչ են մտածում Իր մասին, ո՞վ է Ինքը: Եւ ահա աշակերտները պատասխանում են, թե ոմանք կարծում են Հովհաննես Մկրտիչն է, ոմանք՝ Եղիա մարգարեն, ոմանք՝ Երեմիա մարգարեն, իսկ ոմանք էլ՝ նախկին մարգարեներից մեկը, որ հարություն է առել: Դրանից անմիջապես հետո Հիսուս հարցն ուղղում է իր աշակերտներին. «Իսկ դուք Իմ մասին ի՞նչ եք ասում, ո՞վ եմ Ես»: Եւ առաքյալներից Պետրոսն անմիջապես պատասխանում է. «Դու ես Քրիստոսը, կենդանի Աստծու Որդին»: Եւ Հիսուս ասում է նրան. «Երանի է քեզ Սիմոն, Հովնանի որդի, որովհետեւ մարմինը եւ արյունը չէ, որ հայտնեց քեզ, այլ իմ Հայրը, որ երկնքում է» (Մատթ. ԺԶ. 16):

Ավետարանական՝ առաջին հայացքից թերեւս պարզ այս պատմությունը շատ արդիական է բոլոր ժամանակներում յուրաքանչյուր քրիստոնյայի համար: Եթե այսօր էլ Տերը հարցնի, թե մարդիկ ինչ են կարծում՝ Ո՞վ է Քրիստոս, մարդկանց պատասխանները կլինեն բազմապիսի ու բազմերանգ. ոմանք կասեն՝ մի իմաստուն անձ, այլք՝ գերմարդկային էակ, ոմանք էլ՝ առասպելական անձ, ապաշխարություն քարոզող մի մարգարե, սակայն, ցավոք սրտի, քրիստոնյա աշխարհի մեծամասնությունն այս հարցին պատասխան չունի, որովհետեւ երբեք չի խորհել այդ մասին: Հնդկական մի առած կա, որ ասում է. «Սպիտակամորթները խոսում են Հիսուսի մասին, իսկ մենք խոսում ենք Նրա հետ»:

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր այս Սուրբ Խորանից ընթերցված Ավետարանի միջոցով մեր Տերը մեզանից յուրաքանչուրիս նույն հարցն է ուղղում. «Իսկ դու ի՞նչ ես կարծում՝ Ո՞վ եմ Ես»:

Ո՞վ է Քրիստոս մեզ համար, ի՞նչ է պալիս Նրա ներկայությունը, ի՞նչ դեր ու նշանակություն ունի մեզ համար, եւ ի՞նչ կկորցնենք, եթե հանենք Նրան մեր կյանքից:

Մի պատմություն կա. Վերջին Դատաստանի օրն է, բոլոր ենջեցյալները մեկ-մեկ մոտենում են երկնքի արքայություն ու դժոխք տանող ուղիների ճամփաբաժանին կանգնած մի մարդու եւ որոշ հարցերի պատասխանելուց հետո շարժվում կա՛մ աջ, կա՛մ ձախ: Հերթը շուտով հասնում է մի ասպվածաբանի. ճամփեզրին կանգնած անձը հարցնում է, թե արդյոք ճանաչո՞ւմ է Հիսուս Քրիստոսին: Վերջինս, մի քիչ այլայլված եւ վրդովված, պատասխանում է. «Ինչպե՞ս կարող եմ չճանաչել Նրան, ես ասպվածաբանական գիտությունների դոկտոր եմ եւ Քրիստոսի մասին մի քանի գիրք ունեմ հրատարակած»: Եւ նրան ցույց է տրվում դեպի դժոխք տանող ճանապարհը: Մոտենում է մի քահանա: Նույն հարցը նրան է տրվում: Վերջինս պատասխանում է, որ երկար տարիներ ծառայում է Քրիստոսի եկեղեցուն, ինչպե՞ս կարող է չճանաչել Նրան. քահանան եւս հետեւում է նախորդի օրինակին: Եւ բազմություններ են անցնում... Մի ծերունազարդ կին է մոտենում, հարցն ուղղվում է նաեւ նրան. կինը, գլուխը վեր բարձրացնելով՝ նայում է հարցադրողին, խաչակնքում եւ ասում. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, ես ինչպե՞ս կարող եմ չճանաչել Քեզ», - եւ անցնում Արքայություն:

Առանց Քրիստոսի եւ Նրա հետ միացած բարոյական գաղափարի՝ ոչինչ մնայուն չէ: Առանց Քրիստոսի Եկեղեցի չկա, եւ առանց Քրիստոսի ներկայության սեր, եղբայրություն եւ միաբանություն չկա: Քրիստոսի ներկայությունը մեզ սովորեցնում է հարգել դիմացինին, մեր առօրյա աշխատանքի մեջ բարեխիղճ լինել:

Պիտի ճանաչենք Քրիստոսին՝ որպես կենդանի Աստծո Որդի: Քրիստոս մեր Աստվածն է, Նա մեր Փրկիչն է, որ չարչարվեց, խաչը բարձրացավ, թաղվեց եւ հարություն առավ՝ մեզ եւս հարություն շնորհելով: Քրիստոս մեր խաղաղությունն է, Նա իմաստավորում է մեր կյանքը: Քրիստոս մեր կյանքի հույսն է. Նա մեզ ուսուցանում է, որ քունը տեւական չէ նույնիսկ գերեզմանում: Քրիստոսով մահը մեզ համար դառնում է փառավոր մի այլակերպություն: Նա մեզ առաջնորդում է դեպի անմահություն եւ հավիտենություն: Քրիստոս աշխարհի, մեր ներաշխարհի Փրկիչն է, իսկ անհատի փրկությունը ազգերի փրկության ճանապարհն է: Եւ ուրեմն, ինչպես Ս. Գրիգոր Նազիանզացին է ասում. «Եկե՛ք, քանի դեռ ժամանակ ունենք, այցելե՛նք Քրիստոսին, խնամե՛նք Քրիստոսին, սնե՛նք Քրիստոսին, օթեւա՛ն տանք Քրիստոսին, պատվե՛նք Քրիստոսին»:

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբում է Ս. Գրիգոր Լուսավորչի՝ Ս. Էջմիածնի տեսիլքի տոնը: Մեր առաջին Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորիչն է, որ հեթանոսության մեջ խոստովանեց, ընդունեց եւ ճանաչեց Քրիստոսին՝ ասելով. «Դու ես Քրիստոսը, կենդանի Աստուծո Որդին»: Եւ տարիներ հետո այդ նույն խոստովանությունն էր, որ

դարձավ հայ ազգի կյանքի, մտքի ու սրտի հավատամքը: Եւ ինչպես Ս. Պետրոս առաքյալին մեր Տերը գովեց՝ ասելով. «Դու վեմ ես եւ այդ վեմի վրա պիտի շինեմ իմ եկեղեցին» (Մատթ. ԺԶ. 17), նույն կերպ Ս. Գրիգոր Լուսավորչին ճանաչեց որպես կենդանի վեմ. երկնքից իջնելով՝ Աստծո Միածին Որդին ոսկյա ուռով ու շողարձակ հիմնեց իր Ս. Եկեղեցին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Վահան Թեքեյանը գրում է. «Եկեղեցին հայկական գաղտնի ճամբայ մը ունի, որ կ՚անցնի հոգիներէն եւ կ՚երթա առ Աստուած»: Էջմիածինը այն վայրն է, որ Աստված Ինքն է ընտրել՝ Իրեն մեզ հայտնելու, մեր կյանքը եւ մեզ սրբացնելու համար:

Ս. Էջմիածինն է, որ դարեր շարունակ մեզ առաջնորդում է դեպի Քրիստոսի իրական ճանաչում, այստեղ հավաքված ողջ հայությունն է, որ հայացքը հառած Իջման Ս. Սեղանին՝ բարբառում է. «Դու ես Քրիստոսը, կենդանի Աստծո Որդին»: Երջանկահիշատակ Գարեգին Ա. Հայրապետն ասել է. «Էջմիածինը քար չէ, Էջմիածինը յիշատակ չէ, Էջմիածինը միայն սրբութիւն չէ, Էջմիածինը առաքելութիւն է»: Եւ Ս. Էջմիածնի առաքելությունը հետեւյալն է. ճանաչենք Քրիստոսին եւ գնանք դեպի Նա:

Ուրեմն, սիրելի՛ հավատացյալներ, մենք, որ այսօր կանգնած ենք այդ սրբազան առաքելության առջեւ, մեր հայացքներն ենք հառել առ Աստված եւ մեր օրերի քրիստոնեական Եկեղեցու մեծագույն հովվապետերից մեկի աղոթքներով դիմենք մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ ասելով. «Եկ, Տե՛ր իմ, հայտնի՛ր Քեզ ինձ, եւ այցելի՛ր որդուդ կամ ծառայիդ: Հայտնի՛ր Քեզ ինձ, որ Քո հանդեպ ունեցած սե՛րս մեծանա, որովհետեւ որքան ավելի եմ Քեզ տեսնում, այնքան ավելի եմ Քեզ սիրում եւ ավելի եմ կապվում Քեզ: Եկ, Տե՛ր իմ, եկ եւ ինձ մի՛ սպասիր, որպեսզի չլինի թե Դու սպասես ու ես չգամ... ամեն»: